

## Արձանագրություն N 1-08/16

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016 թ.-ի օգոստոսի 11-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ.(տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ., դասախոս), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Առաքելյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Մնացականյան Հ.Գ. (ուսանող), Պետրոսյան Ա.Կ. (ուսանող), Իշխանյան Ա.Գ. (ուսանող), Ծատրյան Հ.Մ. (ուսանող):

Հրավիրյալի կարգավիճակով ներկա էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական պլանների հաստատման մասին.
- 2.Շուշիի տեխնոլոգիական համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման կարգի մասին.
- 3.ՇՏՀ-ի թողարկող ամբիոնների և ըստ ամբիոնների առարկաների բաշխման մասին.
- 4.Ըստ առարկայական մոդուլների դասացուցակների կազման մասին.

**Լսեցին 1-** Գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական պլանները (զեկուցող՝ Ռ.Մ.Հարությունյան):

**Արտահայտվեցին-**Ա.Ա.Գուլյան, Թ.Գ.Գրիգորյան, Գ.Ա.Հակոբյան: Հավանության արժանացրին ներկայացվող ուսումնական պլանները և առաջարկեցին այն հաստատել:

**Որոշեցին 1-**Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական պլանները:

**Լսեցին 2-** Շուշիի տեխնոլոգիական համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման կարգը ներկայացրեց ռեկտոր՝ Հ.Վ.Թորմաջյանը:

**Որոշեցին 2-**Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման կարգը:

**Լսեցին 3-** ՇՏՀ-ի թողարկող ամբիոնների և ըստ ամբիոնների առարկաների ցանկը ներկայացրեց ռեկտոր՝ Հ.Թորմաջյանը:

**Որոշեցին 3-**Հաստատել ՇՏՀ-ի թողարկող ամբիոնների և ըստ ամբիոնների առարկաների ցանկը:

**Լսեցին 4-**Ըստ առարկայական մոդուլների դասացուցակների կազման մասին առաջարկություն ներկայացրեց ռեկտոր՝ Հ.Թորմաջյանը:

**Որոշեցին 4-**Հանձնարարել ուսումնամեթոդական կենտրոնի պետ՝ Թ.Գրիգորյանին դասացուցակները կազմել ըստ առարկայական մոդուլների:

Նախագահ՝ ստորագրություն **Հ.Վ.Թորմաջյան**

Քարտուղար՝ ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**